# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N << ԵՔ-ԳՀԾՁԲ-19/64-3

22 ապրիլի 2019թ.

ք. Երևան

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Մեսրոպ Խլղաթյան Խոսրովի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1649000** (մեկ միլիոն վեց հարյուր քառասունինը հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032098544
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ________________
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ ա տ ա ր ո ղ**

Ա/Ձ Մեսրոպ Խլղաթյան Խոսրովի
ք. Երևան, Անդրանիկի 79 շենք, բն 16
ՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ
Հ/Հ 16056016515300
ՀՎՀՀ 27909965

Մ. Խլղաթյան ________________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1
22. 04. 2019թ. կնքված ԵՔ-ԳՀԾՁԲ-19/64-3
գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Չ/Հ | ԳՄԱ կոդ (CPV) | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 92621110/248 | «Ազգային ժողովի գավաթի խաղարկություն»Միջոցառման կազմակերպման և անցկացման ծառայություններ մատուցող իրավաբանական, կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել՝<br>• միջոցառման անցկացումը մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ ու մարզագույք:<br>• ձայնային ապարատուրա /2 կվտ հզորությամբ/՝ սպասարկող անձնակազմի և հաղորդավարի ծառայություններով,<br>• մասնագիտական գույք՝ ցատկափոսը հարթեցնող փոցխ, 20 մ. մետր, վայրկենաչափ, 4 հատ մատեր 1x 2 մ. չափերի, 4 հատ մարզանստարան<br>• տեխնիկական գույք՝ 2 հատ աղբաման, 2 հատ ավել, 2 հատ սավոկ,<br>• բժշկական և բուժքույրական ծառայություններ՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ սառեցնող և ցավազրկող,<br>• 2 տեխնիկական և 2 սպասարկող անձնակազմի ծառայություններ,<br>• խորհրդակցության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ,<br>• միջոցառման հաղթողների ու մրցանակակիրների պարգևատրում պատվոգրերով ու շնորհակալագրերով՝ նմուշը, նյութը, էսքիզներն ու որակը նախապես համաձայնեցնելով Պատվիրատուի հետ,<br>• հաղթող թիմի անդամներին ապահովել միասնական մարզահանդերձանքով՝ /24 լրակազմ/ : Մարզահանդերձանքի 1 լրակազմը բաղկացած է բամբակե 1 երկարաթև մարզաշապիկից, 1 մարզատաբատից՝ մոդելն ու գույնը համաձայնեցնելով | դրամ | 299000 | 1 | Նոր Նորք վարչական շրջան | 2019 թվականի ընթացքում՝ ընդ որում մինչև ապրիլի 30-ը ներառյալ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Պատվիրատուի հետ /չափսերը կտրամադրվեն լրացուցիչ,<br>• քաղաքային փուլին մասնակցելու նպատակով հաղթող թիմին ապահովել տրանսպորտային միջոցով : | | | | | |
| 3 | 92621110/250 | «Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք համաքաղաքային բակային առաջնություն»<br>Ֆուտբոլի «Կաշվե գնդակ» բակային առաջնություն- Միջոցառման կազմակերպման և անցկացման ծառայություններ մատուցող իրավաբանական, կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել՝<br>• միջոցառման անցկացումը հաստատված կանոնակարգի համաձայն, վարչական շրջանի բակային բազմագործառության դաշտում, որն ունենա ֆուտբոլի անցկացման միջազգային կանոնների համաձայն սպիտակ գծանշումներ և կահավորված լինի մինի ֆուտբոլի 2 x 3 մետր չափերի, համապատասխան ցանցերով 2 դարպասներով,<br>• ֆուտբոլի գնդակներ հինգ N 4 գնդակներ,<br>• տեխնիկական գույք՝ մրցավարական 1 սեղան, 2 աթոռ, 2 ավել, 2 սավոկ, 2 աղբաման,<br>• ձայնային ապարատուրա՝ 1 կվտ. հզորությամբ, 1 խոսափողով,<br>• բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ ցավազրկող, սառեցնող,<br>• միջոցառման անցկացման ընթացքում տեխնիկական և սպասարկող անձնակազմի ծառայություններ,<br>• չորս մրցավարների ընտրության կատարում մարզաձևի ֆեդերացիայի միջոցով:<br>• վերահսկողություն մրցավարների կողմից միջոցառման արդյունքների անաչառ ամփոփմանը:<br>• Եզրափակիչ փուլի մասնակից թիմի 12 անդամներին միասնական մարզահանդերձանքով՝1–ական լրակազմ խաղային մարզահագուստի տրամադրում,<br>• եզրափակիչ փուլի ընթացքում տրանսպորտային միջոցով թիմին տեղափոխման պատշաճ մակարդակով ապահովում Վոլեյբոլի «Թռչող գնդակ» բակային առաջնություն»- Միջոցառման | դրամ | 1100000 | 1 | Նոր Նորք վարչական շրջան | Նախատեսվում է գնել 2019 թվականի ընթացքում՝ ընդ որում մինչև հունիսի 29-ը ներառյալ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կազմակերպման և անցկացման ծառայություններ մատուցող իրավաբանական, կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել՝<br>• միջոցառման անցկացումը հաստատված կանոնակարգի համաձայն վարչական շրջանի բակային բազմագործառութային դաշտում, որն ունենա վոլեյբոլի անցկացման միջազգային կանոնների համաձայն սպիտակ գծանշումներ և կահավորված լինի 1000-2550 մմ, բարձրությամբ, շարժական՝ բարձրացող–իջնող վոլեյբոլի 2 կանգնակների /կանգնակների խողովակի հաստությունը 76-80 մմ, խողովակի պատերի հաստությունը 3-4 մմ/ վրա տեղադրված ցանցով /9.5 x 1 մ, գործվածքի բջջի չափսը /Box/100 x 100 մմ./,<br>• վոլեյբոլի գնդակներ 5 հատ, որոնցից 3-ը խաղերի անցկացման, իսկ 2-ը՝ թիմերի նախավարժանքների կատարման համար,<br>• տեխնիկական գույք՝ մրցավարական 1 սեղան, 2 աթոռ, 2 ավել, 2 սավոկ, 2 աղբաման,<br>• ձայնային ապարատուրա՝ 1 կվտ. հզորությամբ, 1 խոսափողով,<br>• բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ ցավազրկող, սառեցնող,<br>• միջոցառման անցկացման ընթացքում տեխնիկական և սպասարկող անձնակազմի ներկայություն,<br>• խորհրդակցության և վիճակահանության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ:<br>• կանոնակարգի պահանջների համապատասխան քանակի մրցավարների ընտրության կատարում մարզաձևի ֆեդերացիայի միջոցով:<br>• • վերահսկողություն մրցավարների կողմից միջոցառման արդյունքների անաչառ ամփոփմանը:<br>•Եզրափակիչ փուլի մասնակից թիմի 12 անդամներին միասնական մարզահանդերձանքով՝ 1–ական լրակազմ խաղային մարզահագուստի տրամադրում,<br>• եզրափակիչ փուլի ընթացքում տրանսպորտային միջոցով թիմին տեղափոխման պատշաճ մակարդակով ապահովում Բասկետբոլի «Ոսկե գամբյուղ» բակային առաջնություն»Միջոցառման | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կազմակերպման և անցկացման ծառայություններ մատուցող իրավաբանական, կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել՝<br>• միջոցառման անցկացումը հաստատված կանոնակարգի համաձայն վարչական շրջանի բակային բազմագործառութային դաշտում, որն ունենա բասկետբոլի անցկացման միջազգային կանոնների համաձայն սպիտակ գծանշումներ և կահավորված լինի բասկետբոլի 2 վահանակներով, այդ թվում՝ ցանցերով,<br>• բասկետբոլի գնդակներ 5 հատ, որոնցից 2-ը խաղերի անցկացման, իսկ 3-ը՝ թիմերի նախավարժանքների կատարման համար,<br>• տեխնիկական գույք՝ մրցավարական 1 սեղան, 2 աթոռ, 2 ավել, 2 սավոկ, 2 աղբաման,<br>• ձայնային ապարատուրա՝ 1 կվտ. հզորությամբ, 1 խոսափողով,<br>• բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ ցավազրկող, սառեցնող,<br>• միջոցառման անցկացման ընթացքում տեխնիկական և սպասարկող անձնակազմի ներկայություն,<br>• խորհրդակցության և վիճակահանության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ։<br>• կանոնակարգի պահանջների համապատասխան քանակի մրցավարների ընտրության կատարում մարզաձևի ֆեդերացիայի միջոցով։<br>•վերահսկողություն մրցավարների կողմից միջոցառման արդյունքների անաչառ ամփոփմանը։<br>• Եզրափակիչ փուլի մասնակից թիմի 12 անդամներին միասնական մարզահանդերձանքով՝ 1–ական լրակազմ խաղային մարզահագուստի տրամադրում,<br>• եզրափակիչ փուլի ընթացքում տրանսպորտային միջոցով թիմին տեղափոխման պատշաճ մակարդակով ապահովում Հանդբոլի «Սրընթաց գնդակ» բակային առաջնություն»-Միջոցառման կազմակերպման և անցկացման ծառայություններ մատուցող իրավաբանական, կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել՝<br>• միջոցառման անցկացումը հաստատված կանոնակարգի համաձայն վարչական շրջանի բակային բազմագործառութային | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դաշտում, որն ունենա հանդբոլի անցկացման միջազգային կանոնների համաձայն սպիտակ գծանշումներ և կախավորված լինի հանդբոլի 2 x 3 մ. 2 դարպասներով, այդ թվում՝ ցանցերով,<br>• հանդբոլի N 2 գնդակներ 5 հատ, որոնցից 2-ը խաղերի անցկացման, իսկ 3-ը՝ թիմերի նախավարժանքների կատարման համար,<br>• տեխնիկական գույք՝ մրցավարական 1 սեղան, 2 աթոռ, 2 ավել, 2 սավոկ, 2 աղբաման,<br>• ձայնային ապարատուրա՝ 1 կվտ. հզորությամբ, 1 խոսափողով,<br>• բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ ցավազրկող, սառեցնող,<br>• միջոցառման անցկացման ընթացքում տեխնիկական և սպասարկող անձնակազմի ներկայություն,<br>• խորհրդակցության և վիճակահանության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ:<br>• կանոնակարգի պահանջների համապատասխան քանակի մրցավարների ընտրության կատարում մարզաձևի ֆեդերացիայի միջոցով:<br>• մրցավարական և սպասարկող անձնակազմին օրապահիկների կանխիկ գումարների բաշխում՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված չափորոշիչների համապատասխան:<br>• վերահսկողություն մրցավարների կողմից միջոցառման արդյունքների անաչառ ամփոփմանը:<br>• Եզրափակիչ փուլի մասնակից թիմի 12 անդամներին միանական մարզահանդերձանքով՝ 1–ական լրակազմ խաղային մարզահագուստի տրամադրում,<br>• եզրափակիչ փուլի ընթացքում տրանսպորտային միջոցով թիմին տեղափոխման պատշաճ մակարդակով ապահովում Հեծանվավազքի Երևան քաղաքի«Անիվ» բակային առաջնություն»- Միջոցառման կազմակերպման և անցկացման ծառայություններ մատուցող իրավաբանական, կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել՝<br>• միջոցառման անցկացումը հաստատված կանոնակարգի համաձայն վարչական շրջանի բակային տարածքում /կամ | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | զբոսայգում/՝ որտեղ առկա լինեն հեծանվավազքի 100 մետրանոց 3 վազքուղիներ՝ start և finish նշումներով և համապատասխան գծանշումներով /բոլորը սպիտակ գույնով/,<br>• սիրողական 3 հատ միաչափ և միանման հեծանիվներ,<br>• տեխնիկական գույք՝ մրցավարական 1 սեղան, 2 աթոռ, 2 ավել, 2 սավոկ, 2 աղբաման,<br>• ձայնային ապարատուրա՝ 1 կվտ. հզորությամբ, 1 խոսափողով,<br>• բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ ցավազրկող, սառեցնող,<br>• միջոցառման անցկացման ընթացքում տեխնիկական և սպասարկող անձնակազմի ներկայություն,<br>• խորհրդակցության և վիճակահանության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ:<br>• կանոնակարգի պահանջների համապատասխան քանակի մրցավարների ընտրության կատարում մարզաձևի ֆեդերացիայի միջոցով:<br>• վերահսկողություն մրցավարների կողմից միջոցառման արդյունքների անաչառ ամփոփմանը:<br>• Եզրափակիչ փուլի մասնակից թիմի 4 անդամներին միասնական մարզահանդերձանքով՝ 1–ական լրակազմ խաղային մարզահագուստի տրամադրում,<br>• եզրափակիչ փուլի ընթացքում տրանսպորտային միջոցով թիմին տեղափոխման պատշաճ մակարդակով ապահովում Աթլետիկայի բակային առաջնություն-Միջոցառման կազմակերպման և անցկացման ծառայություններ մատուցող իրավաբանական, կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել՝<br>• միջոցառման անցկացումը հաստատված կանոնակարգի համաձայն վարչական շրջանի բակային տարածքում, որը նախապես կահավորված լինի աթլետիկական համապատասխան պայմաններով՝ 3 հատ 500 մ. վազքուղիներ գծանշումներով, այդ թվում՝ staet, finish, 1 հատ ցատկափոս 2 x 10 մ. չափերի, 1 լրակազմ բարձրացատկի սեկտոր՝ համապատասխան ձողով, 1 հատ սկավառակի նետման տարածք՝ գծանշումներով, | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | • մասնագիտական գույք՝ 2 զույգ մեկնարկի կաղապար, 1 հատ աթլետիկական սկավառակ, 2 հատ վայրկենաչափ, 1 հատ 10 մետրանոց մետր, 1 հատ փոքր՝ ցատկափոսի հարթեցման համար,<br>• տեխնիկական գույք՝ մրցավարական 1 սեղան, 2 աթոռ, 2 ավել, 2 սավոկ, 2 աղբաման,<br>• ձայնային ապարատուրա՝ 1 կվտ. հզորությամբ, 1 խոսափողով,<br>• բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ ցավազրկող, սառեցնող,<br>• միջոցառման անցկացման ընթացքում տեխնիկական և սպասարկող անձնակազմի ներկայություն,<br>• խորհրդակցության և վիճակահանության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ:<br>• կանոնակարգի պահանջների համապատասխան քանակի մրցավարների ընտրության կատարում մարզաձևի ֆեդերացիայի միջոցով:<br>• վերահսկողություն մրցավարների կողմից միջոցառման արդյունքների անաչառ ամփոփմանը:<br>• Եզրափակիչ փուլի մասնակից թիմի 8 անդամներին միասնական մարզահանդերձանքով՝ 1–ական լրակազմ խաղային մարզահագուստի տրամադրում,<br>• եզրափակիչ փուլի ընթացքում տրանսպորտային միջոցով թիմին տեղափոխման պատշաճ մակարդակով ապահովում Շախմատի բակային առաջնություն-Միջոցառման կազմակերպման և անցկացման ծառայություններ մատուցող իրավաբանական, կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել՝<br>• միջոցառման անցկացումը հաստատված կանոնակարգի համաձայն վարչական շրջանի բակային տարածքում, որը նախապես կահավորված լինի շախմատի 4 հատ սեղաններով, 8 աթոռներով, շախմատի 4 հատ ժամացույցներով, շախմատի 1 հատ ցուցադրական խաղատախտակով, 1 լրակազմ մագնիտային հիմքով խաղաքարերով,<br>• շախմատային 1 մեկնաբանի ծառայություններ,<br>• տեխնիկական գույք՝ մրցավարական 1 սեղան, 2 աթոռ, 1 ավել, 1 | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | սավոկ, 2 աղբաման,<br>• ձայնային ապարատուրա՝ 1 կվտ. հզորությամբ, 1 խոսափողով,<br>• բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով,<br>• միջոցառման անցկացման ընթացքում տեխնիկական և սպասարկող անձնակազմի ներկայություն,<br>• խորհրդակցության և վիճակահանության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ:<br>• կանոնակարգի պահանջների համապատասխան քանակի մրցավարների ընտրության կատարում մարզաձևի ֆեդերացիայի միջոցով:<br>• վերահսկողություն մրցավարների կողմից միջոցառման արդյունքների անաչառ ամփոփմանը:<br>• Եզրափակիչ փուլի մասնակից թիմի 1 անդամին միանական մարզահանդերձանքով՝ 1–ական լրակազմ խաղային մարզահագուստի տրամադրում,<br>• եզրափակիչ փուլի ընթացքում տրանսպորտային միջոցով թիմին տեղափոխման պատշաճ մակարդակով ապահովում Շաշկու բակային առաջնություն-Միջոցառման կազմակերպման և անցկացման ծառայություններ մատուցող իրավաբանական, կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել՝<br>• միջոցառման անցկացումը հաստատված կանոնակարգի համաձայն վարչական շրջանի բակային տարածքում, որը նախապես կահավորված լինի շաշկու 4 հատ սեղաններով, 8 աթոռներով, շաշկու 4 հատ ժամացույցներով, շաշկու 1 հատ ցուցադրական խաղատախտակով, 1 լրակազմ մագնիտային հիմքով խաղաքարերով,<br>• շաշկու 1 մեկնաբանի ծառայություններ,<br>• տեխնիկական գույք՝ մրցավարական 1 սեղան, 2 աթոռ, 1 ավել, 1 սավոկ, 2 աղբաման,<br>• ձայնային ապարատուրա՝ 1 կվտ. Հզորությամբ, 1 խոսափողով,<br>• բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով,<br>• միջոցառման անցկացման ընթացքում տեխնիկական և | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | սպասարկող անձնակազմի ներկայություն,<br>• խորհրդակցության և վիճակահանության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ։<br>• կանոնակարգի պահանջների համապատասխան քանակի մրցավարների ընտրության կատարում մարզաձևի ֆեդերացիայի միջոցով։<br>• վերահսկողություն մրցավարների կողմից միջոցառման արդյունքների անաչառ ամփոփմանը։<br>• Եզրափակիչ փուլի մասնակից թիմի 1 անդամին միանական մարզահանդերձանքով՝ I–ական լրակազմ խաղային մարզահագուստի տրամադրում,<br>• եզրափակիչ փուլի ընթացքում տրանսպորտային միջոցով թիմին տեղափոխման պատշաճ մակարդակով ապահովում | | | | | |
| 4 | 92621110/251 | Նախազորակոչային և զորակոչային տարիքի ռազմամարզական խաղեր<br>Միջոցառման կազմակերպման և անցկացման ծառայություններ մատուցող իրավաբանական, կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել՝<br>• միջոցառման անցկացումը մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ ու մարզագույք։<br>• ձայնային ապարատուրա /2 կվտ հզորությամբ/՝ սպասարկող անձնակազմի և հաղորդավարի ծառայություններով,<br>• մասնագիտական գույք՝ ցատկափոսը հարթեցնող փոցխ, 20 մ. մետր, վայրկենաչափ, 4 հատ պտտօղակներ, 4 հատ պարկեր /վազքի համար/, 4 հատ մատեր 1x 2 մ. չափերի, 2 հատ մարզանստարան, օդամղիչ հրացանի փամփուշտներ 500 հատ, պահեստային թիրախներ 50 հատ՝ 1-10 նշումով<br>• տեխնիկական գույք՝ 2 հատ աղբաման, 2 հատ ավել, 2 հատ սավոկ,<br>• բժշկական և բուժքույրական ծառայություններ՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում՝ սառեցնող և ցավազրկող,<br>• 2 տեխնիկական և 2 սպասարկող անձնակազմի ծառայություններ, | դրամ | 250000 | 1 | Նոր Նորք վարչական շրջան | Նախատեսվում է գնել 2019 թվականի ընթացքում՝ ընդ որում մինչև սեպտեմբերի 28-ը ներառյալ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | • խորհրդակցության անցկացում միջոցառման մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ,<br>• մրցավարների ընտրության իրականացում  համապատասխան մարզաձևերի ֆեդերացիաների միջոցով,<br>• միջոցառման հաղթողների ու մրցանակակիրների պարգևատրում պատվոգրերով ու շնորհակալագրերով՝ նմուշը, նյութը, էսքիզներն ու որակը նախապես համաձայնեցնելով Պատվիրատուի հետ,<br>• հաղթող թիմի անդամներին ապահովել միասնական մարզահանդերձանքով՝ /18 լրակազմ/ : Մարզահանդերձանքի 1 լրակազմը բաղկացած է բամբակե 1 երկարաթև մարզաշապիկից, 1 մարզատաբատից ՝ մոդելն ու գույնը համաձայնեցնելով Պատվիրատուի հետ /չափսերը կտրամադրվեն լրացուցիչ/,<br>Քաղաքային փուլին մասնակցելու նպատակով հաղթող թիմին ապահովել տրանսպորտային միջոցով | | | | | |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032098544
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ ա տ ա ր ո ղ**

Ա/Ձ Մեսրոպ Խլղաթյան Խոսրովի
ք. Երևան, Անդրանիկի 79 շենք, բն 16
ՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ
Հ/Հ 16056016515300
ՀՎՀՀ 27909965

Մ. Խլղաթյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 2*
22. 04. 2019թ. կնքված ԵՔ-ԳՀԾՁԲ-19/64-3
գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | | | | | | | ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախ. չ/ հ | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1, 3, 4 | Սպորտային միջոցառումների կազմակերպում | | | | 1399000 | 1399000 | 1399000 | 1649000 | 1649000 | 1649000 | 1649000 | 1649000 | 1649000 | 1649000 |
| **Ընդամենը** | | | | | | | | | | | | | | **1649000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032098544
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կատարող**
Ա/Ձ Մեսրոպ Խլղաթյան Խոսրովի
ք. Երևան, Անդրանիկի 79 շենք, բն 16
ՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ
Հ/Հ 16056016515300
ՀՎՀՀ 27909965

Մ. Խլղաթյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 3*
*«       »              20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ __________________________
______________________________
հվհհ ________________________

Պատվիրատու

______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ __________________________
______________________________
հվհհ ________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«       » «                » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »            20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը                                        Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                                        պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

*Հավելված 9*
*« ԵՔ-ԳՀԾՁԲ-19/64-3» ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

## ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան « 22 » ապրիլի 2019 թ.

Ա/Ձ Մեսրոպ Խլղաթյան Խոսրովի /անձնագիր AH 0623689/ սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ _ԵՔ-ԳՀԾՁԲ-19/64 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

Ա/Ձ Մեսրոպ Խլղաթյան Խոսրովի
ք. Երևան, Անդրանիկի 79 շենք, բն 16
ՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ
Հ/Հ 16056016515300
ՀՎՀՀ 27909965

Մ. Խլղաթյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

1\.

# ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1]

2\. Թիվ

3\. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4\. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ Ա/Ձ Մեսրոպ Խլղաթյան Խոսրովի

5\. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ

6\. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 16056016515300

7\. Վճարողի ՀՎՀՀ՝ 27909965

8\. Վճարողի ՀԾՀ՝

9\. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10\. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11\. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12\.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13\.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14\.Գումարը (թվերով և բառերով)՝ **164900** / հարյուր վաթսունչորս հազար ինը հարյուր/

15\. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16\.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17\.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18\. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19\. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20\. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22\.ա. Շահառուի ստորագրությունները

/____________________/

/____________________/

22\.բ.

Կ.Տ.

21\.ա. Վճարողի ստորագրությունները

/____________________/

/____________________/

21\.բ.

Կ.Տ.

---

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*